ԿԱՅԾԵՐ



ՐԱՖՖԻ



“Բայց այն Սերովբէներից մէկը թռաւ դէպի ինձ, եւ ձեռքումը կրակի կայծեր կային, որ սեղանի վրայից ունելիքով վեր էր առած, եւ իմ բերանին դիպցնելով, ասաց, ահա այդ քո շըրթունքներիդ դիպաւ, եւ քո անօրէնութիւններդ կը վերացնէ, եւ քո մեղքերը կը սրբէ քեզանից„։

Եսայի Զ. Է.



Ա.

ԸՆՏԱՆԻՔ

Իմ մանկութիւնից շատ փոքր բան կարող եմ գրել, որովհետեւ նա անցաւ այնքան շուտ եւ այնքան դարտակ կերպով, որ շատը ես ինքս չեմ յիշում:

Բայց երբ մտաբերում եմ անցեալը, իմ տխուր եւ յիմարութիւններով լի անցեալը, կրկին զարթնում են վաղեմի յիշողութիւնները, եւ որպէս մթին խաւարի միջից, նկարվում է իմ առջեւ մանկութիւնը իր անմեղ-երեխայական կերպարանքով:

Ահա մինը միւսի ետեւից երեւան են գալիս ծանօթ պատկերները. —

Ես տեսնում եմ հայրենի տնակը իր հին, ժամանակի աւերմունքից մաշուած պարիսպներով: Դեռ նոյն տերեւա-



Մեր տանը խիստ սակաւ էի տեսնում հօրս: Նա, որպէս սովորաբար ասում են, դաշտի մարդ էր: Տարուայ երեք եղանակներում՝ — գարուն, ամառ եւ աշուն — նա մշակում էր իր հողերը եւ փոքրիկ այգին, իսկ ձմեռը իր՝ ջուլհակի խորի մէջ կտաւ էր գործում: Բայց դարձեալ մնում էր միշտ աղքատ: Հայրս շռայլ մարդ չէր. ոչ արաղ էր խմում, ոչ ծխում էր եւ ոչ էլ լաւ ուտում կամ հագնըվում էր: Ես դեռ չեմ մոռացել նրա բազմամեայ հողաթափները, որոնք ստէպ կարկատուելուց այնքան ծանրացել էին, որ հազիւ կարելի էր շարժել: Նրա մորթէ գդակը բոլորովին կորցրել էր իր մազերը: Էլ ի՞նչով պէտք էր բացատրել այդ խնայող եւ աշխատաւոր մարդու դառն աղքատութեան պատճառները:

Լինում էր, շատ անգամ տանը հաց չունէինք ուտելու, քոյրերս լաց էին լինում սովից: Եւ ահա, գիշերային տարաժամ պահուն յայտնվում էին հարկապահանջները: Սկսում էին դուռը զարկել: Կը կոտրէին, եթէ իսկոյն չը բաց անէինք: Ներս էին թափվում մի խումբ կատաղի ֆէրրաշնէր: Բոլորովին դժոխք էր դառնում այն ժամանակ մեր տունը: Ամենքս սարսափում էինք: Հայրս մեռելի գոյն էր ստանում, իսկ մայրս երկիւղից սկսում էր դողալ: Ես եւ քոյրերս փախչում էինք ու մտնում մեր քնաշորերի մէջ, թէեւ երբէք քնել կարող չէինք, բայց սուս էինք կենում:

որպէս մի գեղեցիկ պատկեր, նկարած զանազան գոյներով։ Գիւղերը, այգիները, ձեռատունկ անտառները, լաւ մշակուած դաշտերը, բոլորը միախառնուելով հանդիսացնում էին ամբողջ հովիտը իր կանաչազարդ, գեղագրական տարածութեան մէջ։ Ես ջոկում էի բոլոր ինձ ծանօթ տեսարանները։

Հեռու, բարձր ապառաժի վրայ, տեսնում էի ես Ղարնի-Եարուղի աւերակները, աւերակները այն առասպելական ամրոցի, ուր թափուել էր այնքան արտասուք եւ սէր... ուր անօրէն թուրք իշխանի ձեռքը խլում էր ամուսնի գրկից կնիկների ամենագեղեցիկը... ուր տարվում էին ամենաընտիր աղջիկները ամբողջ գաւառից եւ անբախտ զոհերի արտասուքը, ընտանիքի սրբութիւնը, ծնողների աղաչանքը չէին կարողանում ամոքել բռնակալի կրքերը... Դէպի աջ նայելով, ես տեսնում էի սուրբ Յովհաննու մատուռը. միայնակ կանգնած բլուրի գագաթին, որը մի ահագին շաքարի գլխի նման վեր էր բարձրացել ընդարձակ դաշտի միջից։ Որքան քաղցր զգացմունքներով կապուած էր այդ սրբարանը իմ յիշողութեան հետ։ Այնտեղ, տօնական հանդէսների ժամանակ, ուխտաւորների աշխարհային զուարճութիւնները, ախտերը եւ կրքերը եփ էին գալիս, բորբոքվում էին, միախառնուելով կրօնական ջերմեռանդութեան հետ...



ին ընկաւ քաղաքը. նա թագնուած
մէջ, որոնք ձեւացնում էին մթին,
Ես որոշեցի մեր թաղը. այնտեղ ես
էի "մէկին"... կարծում էի, թէ
գիտեմ ի՞նչու նոյն րոպէում իմ
ուքով, ես այլ եւս չը կարողացայ

կրկին նոյն ոլոր-մոլոր սանդուղք-
նկատեցի, որ աշտարակը ունէր

գաւուրի պարանոցի վրայ, գրազ գալով, թէ մեզանից ով որ մի հարուածով կը կտրէ պարանոցը, միւսը պէտք է պարտաւորուի իր հաշուով հիւրասիրել նրան մի ֆինջան քաղցր ղահուէով եւ նարգիլէյով: Այժմ ես տարայ„: Բազմութիւնը գովաբանում է սրիկայի քաջութիւնը, ասելով՝ “մաշալլա... մաշալլա„... եւ հեռանում է: Իսկ սրիկան, իր ընկերի ձեռքից բռնելով, քարշ է տալիս դէպի ղահուէտուն, որ ստանայ խոստացած մրցանակը: Մի ամբողջ օր հօրս դիակը մնում է հրապարակի վրայ: Մուսուլմանները ծաղրելով են անցնում նրա մօտից, թէ ո՛րքան թոյլ է եղել “գաւուրի„ պարանոցը, որ մի հարուածից կտրուել է. իսկ ոմանք զարմանում էին սրիկայի բազկի զօրութեան եւ նրա դաշոյնի սրութեան վրայ: Բայց տեղային հայերը, երկիւղից չէին համարձակուել ցերեկով մօտենալ նրան, եւ միայն գիշերով վեր էին առել դիակը ու թաղել:

Այդ սարսափելի եղեռնագործութեան լուրը խիստ սառնասրտութեամբ ընդունուեցաւ մեր կողմերում, որպէս թէ, սովորական անցքերի կարգից դուրս մի բան չը լինէր: Մեր թշնամիները ուրախացան, իսկ մեր բարեկամները աւելորդ համարեցին տրտմել: Աւելի հասկացող մարդիկ այսպէս էին բացատրում, թէ Աստուած նրա ճակատին այնպէս էր գրած, պէտք է այս տեսակ մահով վախճանուէր: Իսկ իմ քեռիները ասում էին, թէ Աստուած պատժեց նրան, որով-





սիկներից, Թուրքերից եւ քրդերից, զէնքերը չինել տալու: Հեռու կամ ները այնտեղ մնում էին օրերով եւ կը պատրաստուէին նրանց զէնքերը: տերը կերակրվում էին քեռիներիս գամ փող չէին վճարում նրանց Ես փոքր ժամանակս չէի կարողանում նշանակութիւն ունէր այդ նահապե թիւնը՝ համ ձրի աշխատել, չստանալ: Յետոյ հասկացայ, որ այդ էին տալիս ոչ բոլորին, այլ նշանաւոր միայն: Խաների, բէկերի, սէիդների, քուրդ ցեղապետների համար աշխատ մահմեդական ժողովրդի առաջնորդնե էր քաղաքավարի կերպով կաշառել, դրանց բարեսրտութիւնը պէտք էր գրաւել, որպէս զի կարելի լինէր դրանց շնորհիւ հասարակ մահկանացուներից վարձատրութիւն ստանալ: Հակառակ դէպքում, անհնար էր գործել, առաջնորդները կարող էին հրամայել, որ բոլորովին ձրի աշխատեցնեն արհեստաւորներին կամ զանազան չարեր կը սարքէին: Իսկ այժմ ոչ մի Թուրք, ոչ մի պարսիկ, եւ ոչ մի քուրդ չէր համարձակվում իր վճարը չը հատուցանել, որովհետեւ գիտէր, որ պետերը յարգում են, պաշտպանում են վարպետ Բաբային, այսպէս էր իմ մեծ քեռու անունը:

Կար եւ մի ուրիշ բան: Մեր գաւառում բնակւող զանազան մահմեդական ցեղերը, մանաւանդ քրդերը, անհաստատաբնակ ժողովուրդ էին. գարնան սկզբից սկսած մինչեւ աշնան վերջը իրանց հօտերով եւ վրաններով Թափառում էին լեռնային ամարանոցներում, եւ ձմեռը միայն վերադառնում էին իրանց տները: Թափառումների ժամա-

Դ.

ՈՐՍՈՐԴԸ

Անցան մի քանի ամիսներ այն օրից, երբ հարկապահանջները ծախեցին մեր տան կայքը, — անցան մի քանի դա՜ռն եւ մահաբե՜ր ամիսներ...

Մեր շուրջը տիրում էր արդէն ձմեռ, որ սառն ձեռքով խլեց դաշտերի եւ լեռների բոլոր գեղեցկութիւնները։ Ցուրտը օրըստօրէ սաստկանում էր եւ մոյգ-մոխրագոյն երկնքի երեսը աւելի եւ աւելի խոժոռ կերպարանք էր ստանում։ Արեգակը, կարծես, խռովել էր երկրից եւ չէր ուզում իր դէմքը ցոյց տալ։ Վերջապէս եկաւ ձիւնը եւ թանձր պատանը տարածեց երկրի վրայ։

Մութ փոթորկային գիշեր էր։ Դրսում քամին կատաղի կերպով մռնչում էր եւ նորեկ ձիւնի փխրուն տարափը ահագին քանակութեամբ տարուբերում էր մի տեղից միւս տեղ։

ստացել։ Մայրս որպէս վերեւում յիշեցի, իր եղբայրների միակ քոյրն էր, նա իր աղջիկ ժամանակը շատ սիրուած էր թէ եղբայրներից եւ թէ՛ հօրից։ Ամեն կողմից խնդրում էին մօրս ձեռքը, ոչ այն պատճառով միայն, որ նա շատ գեղեցիկ էր, այլ ամեն երիտասարդ մի առանձին բախտաւորութիւն էր համարում լինել փեսայ այն ընտանիքի, որ ամբողջ գաւառի մէջ վայելում էր մեծ յարգանք։ Փեսաների թիւը այնքան շատ էր, որ չը գիտէին, թէ որին պէտք էր ընտրել, կամ որին պէտք էր մերժել։ Վերջապէս ընտրեցին Մահլամ գիւղի մելիքի որդուն, ի հարկէ, առանց հարցնելու իմ մօր կամքը եւ առանց ստանալու նրա հաճութիւնը։ Երբ կատարվում էր հարսանիքի հանդէսը, հէնց այն գիշերը, երբ նորահարսին եւ փեսային պէտք է եկեղեցին տանէին, յանկարծ գտան նորահարսին անյայտացած հօր տնից։ Խայտառակութիւնը չափ եւ սահման չունէր։ Չար լեզուները սկսեցին զանազան կերպով բացատրել նրա պատճառը. ոմանք ասում էին՝ թուրքերը գողացել են նորահարսին, ոմանք ասում էին՝ իրան սպաննել է, ոմանք ասում էին՝ որ նա ծածուկ սիրում էր մի ուրիշին եւ նրա հետ փախել է։ Այդ կարծիքներից արդեօք ո՞րն էր ուղիղ, — այն ժամանակ դժուար էր ստուգել, իսկ ինչ որ ճշմարիտ էր, այն էր, որ իմ մայրը կորաւ եւ կորաւ։

ՄԱՀԻՑ ՅԵՏՈՅ



ԺԲ.

ՄԹԻՆ ԳԱՂՏՆԻՔ

Դառնանք դէպի մեր պատմութիւնը։

Վաղ-առաւօտեան, դեռ արեւը չը ծագած, ես զարթեցայ։ Ես ինձ գտայ խորհրդաւոր մինարէթում, պառկած ցամաք տերեւներից կազմուած անկողնի վրայ։ Գլխիս տակին, բարձի փոխարէն, դրած էր մի խուրձ խոտ։ Կարօի վերարկուն ծածկում էր ինձ վերմակի տեղ։ Երեւում էր, ընկերներս խնամք էին տարել իմ հանգստութեան համար, որովհետեւ դեռ չէի սովորած բացօթեայ կեանքի խստութիւններին։

Գ.

ՀԻՆ ՄԵՂՔԸ

Աշունը մօտենում էր իր վախճանին։

Այդ առաջին աշունն էր, որին հանդիպում էինք մենք, քեռուս տունը տեղափոխուելուց յետոյ։ Դաշտերը ստանում էին տխուր եւ գունաթափ կերպարանք. կանաչ մարգագետինները, օրըստօրէ դեղնելով, մեռելային դէմք էին կրում։ Անխղճաբար փչում էր սառը քամին եւ թափում էր մերկ ծառերի մնացած տերեւները։ Երկնքի խոժոռ եւ մոխրագոյն դէմքի վրայ գլորվում էին մթին ամպերի ահագին բեկորներ եւ արգելում էին արեւի թոյլ ճառագայթները։ Խիստ տխուր եղանակով լսելի էր լինում կռունկների խուլ կռնչիւնը, որոնք բարձր եթերքի միջով, եռանկիւնի շարքերով, դիմում էին դէպի օտար աշխարհ։ Ծիծեռնակներ ամենեւին չէին երեւում, նրանք վաղուց էին գաղթել։ Միայն մրջիւնները խիստ եռանդով կրում էին դէպի իրանց ամբարները ընդեղէնների զանազան տեսակներ։ Ամէն արարած պատրաստվում էր ընդունել ձմեռը — իր անախորժ հիւրը։





Բայց ի՞նչ կարող էր լինել մօրս նաւանդ մի այնպիսի երկրում, ուր տիրում աղքատութիւն, ուր ամէն մարդ ինքն էր տան գործերը։ Նա ընդունում էր երբեմն հրէայ մանրավաճառներից, որոնք մի շապիկ լուղ կարելու համար վճարում էին խիստ չնչին թիւն։ Այդ նրա ցերեկուայ պարապմունքն էր։ Իսկ գիշերների մեծ մասը անց էր կացնում նա իր ջահրէով, կամ բամբակից թել էր պատրաստում եւ մանածը վաճառում էր ջուլհակներին, եւ կամ թէշիով բուրդ էր մանում շալ գործողների համար։ Ճրագլուսի ծախսը դուրս գալուց յետոյ, մնում էր այնքան վաստակ, որ հազիւ բաւական էր լինում շաբաթը մի անգամ, այսինքն տօն օրերում, միս գնելու եւ տաք կերակուր ուտելու։ Մնացած օրերը ապրում էինք համարեա ցամաք հացով։

Մեզ շնորհուած մի ամիս ժամանակն անցաւ ստուերի պէս։ Մայրս չը կարողացաւ մի ամսում պատրաստել պահանջուած գումարը։ Հարկահանները ծախեցին մեր կայքից ամէն բան, որ կարող էր փոքր ի շատէ գին բերել, եւ նրանց թւում վաճառուեցաւ ցորենի մթերքը, որ հաւաքուած էր իմ, Մարիամի եւ Մագթաղի ձեռքով։ Ներեւակայեցէք մեր արտասուքը եւ մեր դրութիւնը այնուհետեւ։ Աղքատութիւնը հասցրեց իր վերջին հարուածը, եւ շատ զգալի էր...

Այդ բոլորը կատարուեցաւ իմ մեծ քեռու եւ իմ մօր հինգ եղբայրների աչքի առջեւ։ Բայց նրանք այնքան աղքատ չէին, որ չը կարողանային օգնել մեզ, որ չը կարողանային ազատել մեզ մեր անտանելի թշուառութիւնից։

Ես յետոյ, շատ յետոյ, հասկացայ այն սառնասրտութեան պատճառը, որ տիրում էր իմ մօր եւ նրա ազգատոհմի մէջ եւ որը արդէն ատելութեան կերպարանք էր



Կ Ա Յ Ծ Ե Ր

Ամէն մի լուր, ամէն մի խօսք, ծակերի միջոցով, կայծակի արագութեամբ տարածվում էր ամբողջ Թաղի մէջ, առանց մի մարդ իր տանից դուրս գալու: Ծակերից շատերը այնքան մեծ էին, որ կարելի էր, մանաւանդ վտանգի ժամանակ, մի տան կայքը Թագցնել կամ տեղափոխել միւսի մէջ, կամ Հարեւանի մօտ ապաստան գտնել: Թագստի Համար իւրաքանչիւր տան մէջ կային ստորերկրեայ մառաններ, որոնց գաղտնի մուտքը, միայն տան տէրոջն էր յայտնի:

Ասացի, Հայոց Թաղի բոլորովին սպառուած ծայրումն էր քեռուս տունը, ուր մենք պատսպարան գտանք մեզ Հասած դժբախտութիւնից յետոյ, այսինքն այն օրից յետոյ, երբ Հօրս պարտատէրները մեզ արտաքսեցին Հայրենական տնակից: Ամենօրեայ երկիւղը, գողերի եւ աւազակների յարձակումների յաճախ կրկնութիւնը ստիպել էին կանգնել տան շրջապարիսպը, որքան կարելի է, բարձր եւ Հաստ պատերով, որոնք անձրեւից եւ խոնաւութիւնից ստացել էին մոյգկանաչ գոյն: Ժամանակի աւերող ձեռքը կիսով չափ մաշել էր շրջապարսպի վերին մասը, բայց նա տակաւին այնքան բարձրութիւն ունէր, որ կարող էր ընդդիմադրել ամենայանդուգն յարձակման:



Այսպէս ամէն օր, վաղ-առաւօտեան գնում էինք դաշտը հաւհատաղ անելու եւ երեկոյեան վերադառնում էինք։ Մեր խրճիթի դռան առջեւ կազմուեցաւ մի փոքրիկ դէզ հաւաքած հասկերից։ Այնուհետեւ սկսեցինք մեր կալը կասել։ Բայց նա այնքան մեծ չէր, որ հարկաւոր լինէր կասել ջորջորով։ Մայրս սկսեց իր ձեռքով մանրել հասկերը մի հաստ փայտով, որը այնքան ծանր էր, որ ես դժուարութեամբ կարողանում էի բարձրացնել։ Երբ յարդը քամուն տուեցինք, մաքուր ցորեանը հաւաքեցինք թաղարների մէջ։ Ձմեռուայ մեր հացի պաշարը արդէն պատրաստ էր։

Դեռ մնում էր ամենահարկաւորը — վառելքը։ Մեր խարխուլ բնակարանի համար պէտք էր բաւական տաքութիւն, մանաւանդ, որ ձմեռը այս կողմերում խիստ սաստիկ է լինում։ Մայրս այնքան զբաղուած էր, որ ամենեւին ժամանակ չունէր հոգ տանելու վառելքի մասին. այդ պատճառով, այդ հոգսը մնաց իմ եւ քոյրերիս վրայ։ Մայրս իր

թէ վերջին սպառնալիքը իմ վրայ էին գործում. ես Փէրրաշից նոյնքան գայլից: Բայց երբ փոքր ինչ մեծացայ եւս չէի վախենում, որովհետեւ հաւկ գայլ չի դառնայ, բայց Փէրրաշի երկիւ իմ սրտից . . . Ինձ թւում է, որ այս նրա մտրակի ձայնը, ինձ թւում է, թ են գիւղացու ցաւալի հառաչանքնե նրան թուլացած, ուշաթափ եղած գանահարութիւնից . . .

Քեռուս տունը, ուր տեղափոխուեցանք մենք, մեզ հասած դժբախտութիւնից յետոյ, գտնվում էր Քօհնայ-Շահարում: Քօհնայ-Շահար նշանակում է հին քաղաք. այսպէս կոչում էին նրան Սալմաստայ Նոր քաղաքից որոշելու համար, որի անունը Դիլման էր: Հին քաղաքը կորցրել էր իր անունը: Շատ հաւանական է, որ դա լինէր մեր Զարեհաւանը կամ Զարեւանդը, որի անունով մի ժամանակ կոչվում էր ամբողջ գաւառը:

Այս քաղաքներում բնակվում էին չորս ազգութիւններ, հայ, թուրք, ասորի եւ հրեայ. իւրաքանչիւր ազգութիւն զետեղուած էր առանձին թաղերում: Հայերը ունէին երկու եկեղեցի, իսկ ասորիները՝ մէկ: Հին-քաղաքն

անը, այստեղ, կարծես, մի քանի քամինը միւսի վրայ: Նոր շէնք կառու-պէտք չէին. քանդում էին զետինը էին բերում ահագին քանակու-քարեր, եւ շատ անգամ բացվում ըներկրեայ բնակարան: Որքան փոփոխութիւններ պէտք է կրած լինէր գզեր այնտեղ բնակուել եւ անհե-

Երբ ջերմ, ամառնայ
նայում է Սալմաստայ պայծառ
լուսաւորուած հովտին, տեսնու
աշխատասէր ձեռքով, խոստանո
տեսնում է՝ ցորեանը, գարին,
ղէնների ամեն տեսակները, ի
ներկայացնում են խիստ գոհա
տեսնում է՝ մրգաբեր այգիները
նաազնիւ տեսակներով. — տե
մարգերի վրայ արածում են ո
խաշների հօտեր, — մի խօսքով

թիւնը անխնայ առատութեամբ թափել է այստեղ իր հարստութիւնները: Նա սկսում է մտածել. "որքան բախտաւոր են ապրում այստեղ մարդիկ"... Իսկ այդ ճոխութիւնները, բնութեան այդ պարգեւները չեն պատկանում այն բիւրաւոր աշխատող ձեռքերին, որոնք դաշտերի վրայ, արեւի կրակոտ բոցերի մէջ քրտինք են թափում:

Ահա գիւղերում այստեղ եւ այնտեղ բարձրանում են ամրոցներ, որոնք իրանց հպարտ աշտարակներով եւ ատամնաւոր պարիսպներով իշխում են շրջակայքի վրայ, նրանց մէջ բնակվում են "աղաները" իրանց սեւտերով եւ մոլութիւններով, — ահա նրանցն է պատկանում երկրի բոլոր բեղմնաւորութիւնը, նրանք են շահագործում մշակ մարդու աշխատաւոր ձեռքի վաստակը:

Երեխայութեանս ժամանակ, երբ ես որ եւ իցէ անկարգութիւն էի անում, տատս եւ մայրս ամեն մէկը իր առանձին եղանակն ունէր ինձ սաստելու, որ վախենամ եւ հանգիստ կենամ: Տատս ասում էր. "Ս ո ւ ս, ս ո ւ ս, մարդագէլը եկաւ, քեզ կտրամ, կուտի": — Մայրս ասում էր. "Չէնդ կտրի, թէ չէ, Ֆէրրաշին կը կանչեմ"... Թէ առաջին եւ

նալ քո միշտ տխուր եւ գունաթափ դէմքը։ Ի՞նչու դու ուրախ լինել կարող չէիր… Ի՞նչու այնպէս սպաննուած էին քո գեղեցիկ աչքերը, որոնցից արտասուքը շատ քիչ էր պակասում…

Մայրս մի բարձրահասակ կին էր, նիհար եւ թոյլ կազմուածքով։ Ոտքի վրայ նա միշտ հիւանդ էր, բայց երբէք չէր պառկում։ "Ո՞վ պիտի պահէ իմ երեխաներին", պատասխանում էր նա, երբ նրան ասում էին, թէ պէտք է փոքր ինչ հանգստանալ, թէ պէտք է փոքր ինչ կազդուրել սպառուած ուժերը։ Ամբողջ օրը դադարում չունէր։ Նա էր թխում մեր տան հացը, նա էր եփում կերակուրները, նա էր լուանում մեր շորերը, նա էր կարում եւ կարկտնում մեր հագուստը։ Բայց տնային հոգսերը չէին, որ մաշում էին նրան, — նրա ցաւը սրտից էր… Ես այն ժամանակ չէի հասկանում, բայց հիմայ հասկանում եմ…

Մեր գիւղում գովասանուած էր մօրս վարպետութիւնը կարելու եւ ձեւելու մէջ, բայց շատ քիչ էին վճարում նրա աշխատութիւնների համար։ Շաբաթական մի քանի շահի հազիւ էր վաստակում եւ նրանցով ապրում էինք։ Տատիս մեռնելէն յետոյ տան հոգսը բոլորովին մնաց մօրս վրայ։ Քոյրերս՝ Մարիամը եւ Մագթաղը դեռ փոքրիկներ էին. դրանք աւելի խանգարում էին մօրս, քան թէ օգնում էին։



ման մէջ է։ Նրա ամենատես աչքերը ամեն բանի վրայ կը նայէին եւ ամեն բան կը դիտէին, նրա անհանգիստ լեզուն ամեն բանի մասին հարցմունքներ կ՚անէր եւ անվերջ հաշիւ ու համարներ կը պահանջէր։ Մինչեւ մահ նա չը թողեց ձեռքից իր կառավարութեան գաւազանը՝ — ահագին փայտեայ շերեփը, որով նա ընթրիքի եւ ճաշի ժամանակ կերակուր էր բաժանում։ Մինչեւ նրա մահը մեր տան թէ մեծը եւ թէ փոքրը ամենայն խոնարհութեամբ հպատակում էին նրա հեղինակութեանը։

Տատս շատ աշխա
թէ որպէս գիշերի մեծ
դնում էր իր առջեւ
ձեռքով, պտոյտ տալ
թել էր պատրաստու
կում է իմ ականջնե
տխուր, մելամաղձակա
թէ դեռ լսում եմ նր
ճռճռոցը։

Մեր գիւղում տա
ներից մէկը, իսկ իր տան
էր անսխալականութեան
մանակս հիացած էի նր
գիտէր։ Նա գիտէր, թէ
այն երազները։ Նա գիտ
մարդու մարմնի այս եւ
հասկանում էր կաչաղակի լեզուն, եւ բացատրում էր, թէ ի՞նչ լաւ խաբարներ է բերում նա, երբ մեր պատի վրայ նստած, կրչկրչում է։ Նա լսել չէր կարող բուի չարագուշակ ձայնը, եւ պատուիրում էր ինձ՝ քարով սպաննել նրան, երբ կը նստէր մեր պատի վրայ։ Նա գիտէր, թէ ինչո՞ւ Սողոմոն

Բ.

ՀԱՅՐԵՆԻՔ

Պարսկաստանի Ատրպատական կոչուած նահանգի ամենահարուստ գաւառներից մէկն է Սալմաստը։ Նա բռնում է Ուրմիոյ ծովակի արեւմտեան ափերը, եւ շրջապատած լեռների ալեքաւոր բարձրութեամբ, կազմում է մի գեղեցիկ, բոլորակ հովիտ, որ ոռոգվում է Սօլայ գետով։



Սալմաստը որպէս հին ժամանակներում եղել է Հայաստանի բազմամարդ գաւառներից մէկը, եւ այժմ նրա բնակիչներուն մեծ մասն բաղկացած էին հայերից։ Մնացեալ ազգաբնակութիւններին պատկանում էին Թուրքերը, հրեաները, ասորիները եւ քրդերը, — այդ բոլորը միասին վեր առած, հազիւ թէ հայերի կէս մասին էին հաւասարվում։

Ամեն դար, սկսեալ խորին հեթանոսական ժամանակներից, թողել էր այդ գաւառում իր տիրապետութեան հետքերը։ Այստեղ դեռ տեսնվում էին հին Զարեհաւանի հետքերը։ Այստեղ ահագին մոխրաբլուրներ դեռ յիշեցնում էին մոգական ատրուշանները եւ ոչնչացող կրակի հազարաւոր տարիներով լափած նիւթերը։

քաղցած քնեցին։ Ես նստած էի վառարանի մօտ եւ շուտ-շուտ դնում էի նրա մէջ ցամաք տերեւներ եւ չոր մացառներ, որ քոյրերիս հետ հաւաքել էինք այգիներից։ Նրանք յանկարծ բռնկւում էին, բոցավառւում էին եւ քանի րոպէից յետոյ կրկին հանգչում, մոխիր էին դառնում։ Այդ խաղը պատճառում էր ինձ աւելի զուարճութիւն, քան խրճիթի մէջ որ եւ իցէ տաքութիւն։

Դուռը սաստիկ զարկեցին։ Մայրս չը լսեց ես գնացի բաց արի։ Ներս վազեց սպիտակ գնտակի նման մի բան. երբ անցաւ շէմքից, կատուի պէս թափ տուեց մարմինը եւ ձիւնը բամբակի գլուջների նման թափուեց ցած։

— Տօ, Մարօ՛, գետի՛նը մտնես, ո՞րտեղից եկար, հարցրի ես։

Փոքրիկ աղջիկը ոչինչ չը պատասխանեց եւ իմ վրայ ուշադրութիւն անգամ չը դարձրեց, միայն գցելով մօրս մօտ թաշկինակի մէջ կապած մի բան, վազեց դէպի վառարանը եւ սկսեց իր լըջացած ձեռքերը տաքացնել արդէն մարած կրակով։ Երբ նկատեց, որ ջերմութիւն չը կայ, գնաց մօրս մօտ, եւ գրկելով նրա պարանոցը, կպաւ կուրծքին։

— Հայրս ուղարկեց, ասաց նա, ցոյց տալով կապոցը։

Յետոյ դարձաւ դէպի ինձ, կարծես, նա չէր կարող համբերել, որ իմ կոշտ հարցմունքը թողեց առանց պատասխանի.





ՎԱՃԱՌԵԼԻ ԳԻՐՔԵՐՆ ԵՆ



— Կարօն ի՞նչու է հարցնում իր աղախնի անունը։ Կարօն գիտէ, որ մարդիկ Սուսան են կոչում նրան։ Կարօն բոլորը գիտէ... — Երբ Դինբուլի խանը կողոպտեց, կոտորեց մեր ցեղը, Սուսանը կապեց իր քամակին **Կարօյ երեխան** եւ մենակ անցաւ Հերաթի անապատներից... — Ա՜խ, Սուսանի աչքերի լոյսը... Այն անցքից յետոյ Սուսանը վատ է տեսնում...։

Այդ անկապ խօսքերը այն աստիճան մթին երեւացին ինձ, որ ես ոչինչ չը հասկացայ, մանաւանդ որ, բօշան խօսում էր երրորդ դէմքով։ — “Կարօի երեխա՜ն„... Մի՞թէ Կարօն երեխայ ունի. ո՞րտեղ է նա։ — Հերաթի անապատներից ազատել է նրան բօշան...

Այս բոլորը ինձ համար հանելուկներ էին։ Միայն այսքանը հասկացայ, որ Կարօն եւ խորհրդաւոր պառաւը նախածանօթներ են եղել։ Միջին Ասիայի խորքերում, Աւղանիստանում, նրանք ունեցել են յարաբերութիւններ։ Բայց ի՞նչ դէպքով, ի՞նչ առիթով։ — Այդ մասին չը հարցրի պառաւից, զգուշանալով, բոլորովին չը մերկացնել ինձ, թէ ես Կարօն չեմ։